

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պարտք հմր. 8 ՄԶՃ.
• Գաւառաց • 10 ՄԶՃ.
վեցամսեյ • և Պարտք • 4 ՄԶՃ.
• Գաւառաց • 5 ՄԶՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :



ՄԱՐԿԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած յրազ րանց ճանրու
ծակքը խմբագրութեան վրայ է :
Կրպոյտ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խմբագր
— Տնօրէնին պիտի ուղարկուի : Գաւա-
թիս Սանարքըլար ճանտնէսի ինչ
198 : Նոյն խան , Գաւաթի գրասեն-
եակը :
Ճանրու ծակքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տէրութեանց խորհրդոյն բացումն
հինգշաբթի օրը տեղի պիտի ունե-
նար , ըստ հրաւիրագրոց , բայց կըս-
ւէր նաեւ թէ մինչև յունիս 6/18 օրա-
նախագիծէ : Տէրութեանց երեսփո-
խանները կը հասնէին և իրենց աս-
տիճանին համեմատ արժանաւայել
պատուով կընդունուէին Գերմանիոյ
արտաքին գործոց նախարարութեան
պաշտօնատարներէն : Օսմանեան ե-
րեսփոխանը կարելի է՞ թաղման ներ-
կայ չկրնային զանուիլ , բայց որով
հետեւ այն աւելի երեսփոխանք ի-
րենց վկայագրերը միայն պիտի ներ-
կայացնէին , Օսմանեան երեսփոխա-
նաց առաջին օրուան բացակայութիւ-
նը քաղաքական կարեւորութենէ զուրկ
էր : Պաշտօնական ակումբներու և
կոչուեցներու մէջ երեսփոխանք այբ-
ուբենի կարգաւ պիտի նստէին , և
Վիեննայի մէջ 1871 թին կազմուած տէ-
րութեանց խորհրդոյ պաշտօնական
արարողութիւնները նմանապէս պիտի
գործադրէին չեղեր :

Յունաստանի և Ռուսիոյ կող-
մէն երեսփոխաններ կերթան ի Պէր-
լին , որք թէպէտ խորհրդակցութեանց
առթիւ քուէ տարու իրաւունք չու-
նենան , իրենց երկրին բաղձանքը պի-
տի ներկայացնեն ու բացատրեն : Հե-
լենք կը յուսային որ Անգղիա իրենց
իրաւունքը պիտի պաշտպանէ , և եւ-
րապոստի վարձատրութիւն պի-
տի առնու իրեն սահմանակից Յոյն
գաւառներէն : Իսկ Ռուսիոյ նա-
խարարութիւնը խորհրդարանին մէջ
յայտարարեց թէ տէրութեանց խոր-
հրդոյն առջև ազգային շահերը պի-
տի պաշտպանէ յատուկ երեսփոխան-
ներ յղելով , և Պետարպիան թողու-
հաճութիւն չպիտի տայ Գոհութեան
արժանի է որ այս ամեն կարեւոր քա-
ղաքական խնդրոց մէջ՝ Հայոց և Հա-
յաստանի խնդիրն ևս ուշադրութեան
կառնուի դարեւն ի վեր առաջին
անգամ : Արդէն ծանուցինք Անգղիոյ
խորհրդարանին մէջ Հայոց նկատմամբ
նախարարաց ըրած յայտարարութիւն-
ներն , որք խորին գոհութեան ար-
ժանի են : Լորտ Սալիսբորի ըսաւ թէ
ամեն տէրութիւնը կը փափաքին որ
տէրութեանց խորհուրդն Հայաստա-
նի դատը պաշտպանէ :

Կը յիշեն անշուշտ ընթերցողք
թէ անցեալները վատահոլութիւն յայտ-
նած էինք մեր ազգին նկատմամբ
Անգղիոյ և Եւրոպիոյ համակրութեան
վրայ : Գոհ ենք որ մեր խօսքերը կա-
տարեցան , և Հայաստան վերակեն-
դանութեան ու յառաջդիմութեան
յոյս կրնայ ունենալ ի թէ իւր ամեն
դասակարգն ամենայն ուրիշ և մի-

ութեամբ աշխատին սոյն բաղձալի նը-
պատակին , ի բաց թողով հին տգի-
տութիւնն ու անփութութիւնը : Անգ-
ղիոյ արտաքին գործոց նախարարին
օգնական Պ. Պըրք յայտարարեց թէ
տէրութեանց խորհուրդն Այսթէֆա-
նուսի դաշնագրութիւնը քննած ժա-
մանակ Հայոց խնդիրը նկատողութեան
պիտի առնու : Յայտնի է որ նոյն դաշ-
նագրութեան վերջապահութեան յօդ-
ուածքը կը տրամադրէ Հայաստանը
Քիւրտերու , Չեքէզներու և այլոց
հարստահարութիւններէն ազատել
տեղական բարեկրօնները ի գործ
դնելով : Բայց այս բարենորոգում
ները սահմանուած և գործադրու-
թեան համար երաշխաւորութիւններ
դրուած չեն : Բարձրաստիճան Հայ
եկեղեցականաց պատուիրակութիւնն ,
որ Պէրլին կերթայ , հարկաւ այս կէ-
տերուն վրայ պէտք եղած ուշադրու-
թիւնը պիտի հրաւիրէ : Տարիներէ
ի վեր թուրքիոյ մէջ ծագած ապս-
տամբութեանց անվերջանալի ընթացք
առնուին դիտարար պատճառն այս
էր , որ ապստամբք բնաւ վստահու-
թիւն չէին , յայտներ խոստացեալ բա-
րենորոգմանց վրայ , և կըսէին թէ ի-
րենց վիճակն աւելի պիտի վատթա-
րանայ եթէ զենքը վար դնեն , կամ
եթէ իրենց ապստամբած սահմանա-
կից օտար երկրներէն ետ դառնան
Հայերն յապտամբութիւն չդիմեցին ,
բայց իրենց վիճակը լաւ չէր , մանա-
ւանդ պատերազմի ասպարէզ կամ
գրացի եղող դաւաճաց մէջ , ուստի
եթէ ապստամբեալ գաւառաց նման
քաղաքական ինքնիշխանութիւն չտրը-
ւի Հայաստանի , այսու ամենայնիւ
կենաց ընչից և պատուոյ ապահ-
ւութեան և Հայոց քաղաքային իրա-
ւանց պահպանութեան համար ձեռք
առնուելը միջոցները չեն կրնար ու-
րիշ գաւառաց մէջ հաստատուելիք
կարգադրութիւններէն վար մնալ :
Հայաստանի խնդիրն ոչ այնչափ քա-
ղաքական ինքնիշխանութեան և փա-
ռասիրութեան խնդիր է , որչափ ինք-
նապահութեան , գոյութեան իրա-
ւանց և քաղաքային տղապանութեանց ,
առանց որոց՝ ոչ միայն զարգացումն
և յառաջդիմութիւնն՝ ոչ և ապրիլն
իսկ անհնար է :

Բ. Գուրու մեծ տէրութեանց ծա-
նուցագիր մը հաղորդեց , որոյ մէջ
հայտուութեան բանակցութեանց եղա-
նակը կը նկարագրէ , և կը բողբէ
չատ մը կէտերու դէմ : Բանակցու-
թիւնները փետրվար 2/14 թին Արքիա-
նուպոլոյ մէջ սկսան և փետրվար 19
թին (3 մարտ) Այսթէֆանուսի մէջ վեր-
ջացան : Իրօք բանակցութիւնները մի-
այն ինն օր տեւեցին , և այս կարճ
միջոցին Օսմանեան երեսփոխանք
պարտաւորեցան ամենէն կարեւոր և
գեթաբարկնիւն խնդիրներն առանց

երկար բարակ քննութեան և վիճա-
բանութեան ընդունիլ՝ Ռուս երես-
փոխանաց սպառնալից և ստիպման
ներքեւ : Բայց Նուրադինը կը յայ-
տարարէ թէ յաղթողին իրաւունքն է
հաշտութիւնը կարելի եղածին չափ
շուտով կնքել . քանզի որչափ որ պար-
տեալն օգնութիւն գտնելու կամ իւր
գործիւնը վերակազմելու յուսով
գործն երկարաձգել ուղէ , մի և նոյն
պատճառաւ , այսինքն պարտելոյն
վերականգման կամ օգնութիւն գըտ-
նելու ժամանակ չտալու համար՝ յալ-
թոյն ալ կը պարտաւորի իւր պայ-
մանները շուտով ընդունել տալ : Բայց
Նուրադինը իշխանին Գաղղիոյ նը-
կատմամբ 1871 թին բռնած ընթացքը
յիշելով կընէ այս առաւելութիւնը ,
քանզի թէ և 1836 թին Ռուսիա պարտ-
եալ էր , բայց իրեն նկատմամբ խիստ
վճիռաւորութեամբ վարուեցան Ռուսիոյ
տէրութիւնը , և փարիզի դես-
պանաժողովը Ռուսիոյ անձնասիրու-
թիւնը վերադարձ տալով անհաւատ-
կութիւնն Ռուսիոյ միշտ աշխատեցաւ
փարիզի դաշնագրութիւնն աւելելու ,
որով Արեւելոյ մէջ իւր բացառիկ ազ-
դեցութիւնը պիտի վերահաստատէր :
Ներկայ պատերազմին զաղտնի նպա-
տակն այս էր , բայց Անգղիոյ ազդու
միջամտութիւնն այս վտանգին ա-
ռաջքն առաւ : Պէտք չէ որ Ռուսիա
պարզապէս թուրքիոյ տեղն անցնի ,
այլ եւրոպական քաղաքակրթութիւնը
պէտք է զարգանայ թուրքիոյ մէջ ,
որով միայն ամեն տարր իրաւացի
գոհութիւն կընդունի :

Անգղիոյ և Ռուսիոյ մէջ եղած
բանակցութիւններն այս երկու տէ-
րութեանց մէջ համաձայնութիւն հաս-
տատած են . սակայն Աւստրիա տա-
կաւին չէր կրցած իւր շահերը պաշտ-
պանելու համար Ռուսիոյ հետ համա-
ձայնիլ : Աւստրիոյ խորհրդարանին
պատգամաւորութիւնն այս ամեն
կասկած յայտնել սկսելով՝ հարցում
եղաւ Աւստրիայի կոմսին թէ Ռուսիոյ
հետ եղած բանակցութիւնը ինչ վի-
ճակի մէջ են , և թէ Ռուսիա ինչ
պատճառներով տուած է Վիեննայի կա-
ռավարութեան առաւելութիւններուն :
Աւստրիայի կոմսը պատասխանեց թէ
Այսթէֆանուսի դաշնագրութեան վրայ
տեղեկութիւն առնուին պէտք Աւստ-
րիոյ անընդունելի կէտերը Ռուսիոյ
ծանուցած էր : Ենկէց ի վեր քանի
մը պատասխաններ եկած էին Բեռ-
լին քաղաքիկէն , բայց ասոնց ոչ մին եր-
կու տէրութեանց մէջ համաձայնու-
թիւն չէր կրնար հաստատել : Հետե-
ւաբար Լոնտոնի և Բեռլինի միջև
մէջ եղած բանակցութիւնը յաջողած
են , բայց Վիեննայի և Բեռլինի միջև
մէջ եղած բանակցութիւնը տակաւին
անյաջող մնացած էին : Կերեւի որ
Ռուսիա խոստումներ տալով Վիեն-
նայի կառավարութիւնը չեղորացու-

ցած էր : Իկնաթիքի գործարարը վի-
եննա գնացած ու վերադարձած էր
առանց բացորոշ համաձայնութիւն
մը հաստատելու . բայց Վիեննայի ար-
քունեաց մէկ մասը կարծելով թէ
Ռուսիա Պարսկի թերակղզոյն Արեւ-
մտեան մասն Աւստրիոյ պիտի թո-
ղու : աշխարհացոյց տնտեսական
և ծրագիրներ կը պատրաստէր մինչև
Սերանիի տիրելու համար : Իսկ Ռու-
սիա երբ Անգղիոյ հետ համաձայնու-
թեան հաւանականութիւն տեսաւ ,
յանկարծ Վիեննայի արքունիքը թո-
ղուց և Լոնտոնի հետ բանակցու-
թիւնները շարունակելով ի գրեթե
հանգիստ : Այսպէս Վիեննա բացը մնա-
ցած կերեւի : Բայց Աւստրիայի կոմսն ,
որ հիմա զինուորական ցոյցեր ընել
սկսած է , կը յուսայ եղբոր որ Պէր-
լին մէջ Լորտ Սալիսբորիի հետ խո-
սակցելէ ետեւ շուտով պիտի կրնայ
Աւստրո-Հունգարական շահերը պաշտ-
պանել :

Պրիւսիայի Նուրադինը Անգղիոյ
երեսփոխանաց ժողովին յունիս 3 թին
տեղ մէջ Հայոց խնդրոյն նկատմամբ
Պ. Պուրքի ըրած յայտարարութեան
առթիւ հետեւեալ խորհրդածութիւ-
նը կընէ :

“ Այսթէֆանուսի դաշնագրութիւ-
նը քանի՞ քանի՞ անգամ ամբաստան-
ուեցաւ թէ միմիայն Սալիսբորի շահերն
հողացած և թուրքիոյ ուրիշ քրիս-
տոնեայ ժողովրդոց շահերն աննոց
զոհած է : Այս ամբաստանութիւնն
ամենէն աւելի ջերմութեամբ Հայոց
անունովն արտաբերեցաւ : Մոռնալ
կը ձեւացնէին թէ մարտ 3 թին դաշնա-
րութիւնն յոտկապէս բարենորոգում
ներ պայմանադրած է ի նպատակ Հայ
ժողովրդոց Արիւնդ : Ռուսո-թուրքա-
կան դաշնագրութիւնն այս մասին
անակնկալ հասուցում մ'ատարաւ .
ստուգիւ անակնկալ , որովհետեւ Անգ-
ղիոյ երեսփոխանաց ժողովին մէջ
տրուեցաւ նոյն իսկ արտաքին գոր-
ծոց նախարարի խորհրդական Պ.
Պուրքէն , որ Պ. Գէնաուէյ երեսփո-
խանին հարցմանը պատասխանելով
յայտնեց թէ Այսթէֆանուսի դաշնա-
գրութեան 16 ըդ յօդուածն Հա-
յոյ վրայ կ'ընդդիմէ , և աւելի պիտի
մատակարարէ տէրութեանց խորհր-
դոյն , որ անոնց վիճակն ազդուապէս
բարւոյցելու միջոցներ անօրինէ :

“ Այս առաջին անգամն է — և
կը յուսանք վերջինը չըլլալ : — որ
Անգղիոյ կառավարութեան անդամ
մը հրապարակաւ Այսթէֆանուսի դաշ-
նագրութեան վրայ խոսեցաւ առանց
քննադատելու և եպերելու նպատա-
կի :

Անգղիոյ Լորտերուն խորհրդարա-
նին յունիս 6 թին (Ն. 8) նստին մէջ
Հայաստանի նկատմամբ եղած վիճա-

բանալ թիւնն տոնենալ լուծենէն կը քաղենք :

Շափթէզը կրման արտաքին գործոց նախարարին հարցում մ'ուղղելով ըստ թէ «Հայք», զորս ինք կը ներկայացնէր, կը գանգատուի որ Այսթէֆանոսի դաշնադրութեան մէջ միւս քրիստոնեայ ազգերը մանրամասնաբար յիշուած են, բայց Հայք՝ անուամբ և եթէ, ուստի չեն կրնար ապահով ըլլալ թէ իրենց խնդիրը տէրութեանց խորհրդոյն ուղարկութեան կատարելապէս պիտի ներկայանայ : Հայք կրնան թէ իրենց ուղարկութեան արժանի ազգութիւն մ'են չորս հինգ միլիոնէ բաղկացեալ, որուն երեք միլիոնը Թուրքիոյ մէջ կը բնակի, մէկ միլիոնը Ռուսիոյ իշխանութեան ներքեւ կը գտնուի, մնացեալը Պարսկաստանի Հնդկաստանի մէջ և ուրիշ կողմեր ցրուած է : Արդարեւ ապահովութիւն չկայ թէ իրենց խնդիրը նկատողութեան առնուելով Քիւրդերուն բռնութիւններէն զերեքը ազատելու միջոցներ պիտի գործադրին : Հետեւաբար Հայք կը հարցնեն թէ արդեօք Անգլիոյ արտաքին գործոց նախարարը պիտի ջանայ որ Հայոց խնդիրն ևս տէրութեան խորհրդոյն մէջ լսուի : Հայք խելացի և արուեստից ու վաճառականութեան մէջ յաջողակ ժողովուրդ մ'են, և պատշաճ կերպիւ աղերսալիք մատուցած են : Իւրեք իրաւունք ունին 1856 ի դաշնագրութեան համեմատ պաշտպանուելու : Վերջապէս, Լորտ Շափթէզը պիտի հաւանական յայտնուի թէ Լորտ Սալիսբըրի իւր վեհաժողովոյ պէտք եղածն ի գործ կը դնէ այս մեծ ազգին (Հայոց) չանցողապանելու համար, որ այնչափ ժամանակէ հետէ բռնութեան ներքեւ կը չեծէ :

Լորտ Սալիսբըրի պատասխանէ թէ կը կարծէ որ Հայք Այսթէֆանոսի դաշնադրութեան մէջ յիշուած են, որով Սալիսբըրի կը խոստանայ զիրենք Քիւրդերու բռնութիւնէն պաշտպանել : Եթէ լաւ կը յիշուի, ըստ, դաշնադրութեան մէջ միւս քրիստոնեայ մասնաւորապէս յիշուած չեն, միայն ըսուած է թէ քրիստոնեայ գաւառացի օրէնքներ պիտի տրուին : Եթէ քրիստոնեայ բացառիկ կերպիւ կամ մեծամասնութեամբ մասնաւոր գաւառի մը բնակիչ են, կարելի է անոնց և իրենց գաւառին մասնաւոր օրէնք տալ : Բայց երբ ուրիշ կրօնքէ եւ զող ժողովուրդոց հետ խառնուած են, կարելի չէ անոնց մասնաւոր օրէնք տալ առանց զիսկու մի և նոյն տեղւոյ դանազան բնակչաց տարբեր օրէնք տալու անկասկածաբար : Հայաստանի խնդրոյն մէջ դժուարին կէտն այս է, քանզի Հայք թէ և առանձին ազգութիւն մը կը կազմեն, բայց այնչափ ցրուած և այնչափ խառնուած են Թուրքացի հետ, որ կամ Թուրքացի Հայոց և Քիւրդերու հաւասարապէս գործադրելի օրէնք տալու է, կամ վերադառնալ անկասկածաբար իրենց հետեւելու է : Լորտ Սալիսբըրի յարեց թէ չկրնար այժմէն ըսել տէրութեանց խորհրդոյ այս ամասն ընելիք գործը, բայց անտարակոյս, ըստ, Հայաստանի խնդիրը դաշնադրութեան յօդուածին հետ նկատողութեան պիտի առնուի : Վստահ եմ, ըստ, որ Եւրոպական տէրութիւնք մեծ համակրութեամբ պիտի ընեն Հայաստանի խնդիրը, Հայոց վիճակը բարւոյն կ'ապահովուի : Անգլիոյ կառավարութեան զգացումը համակրութիւն և արգելութիւն է :

Լորտ Փարնարփոն գոհութիւն յայտնեց արտաքին գործոց նախարարին խօսքերուն, որոյցէ կը հետեւի թէ Հայոց խնդիրը տէրութեանց խորհրդոյ պիտի ներկայանայ և Անգլիա արգելութեան ոգով պիտի շարժի : Հայերէն աւելի արգելութեան կարօտ ազգ մը չկայ, որք խաղաղ աշխատասէր և վաճառաւոր են, սակայն անոնցմէ աւելի բռնութիւն կրող ալ չկայ : Լորտ Փարնարփոն Փոքր Ասիոյ մէջ Հայոց կրած հարձակումը տեսած է, և այսչափ երկար անհրաժեշտութիւնէ մը վերջէն անոնց կրած նեղութիւնները կըրնայ երեւակայել : Քիւրդերն հրով և սրով եկած էին : Լորտ Փարնարփոն յուսաց որ տէրութեանց խորհուրդն այս խնդիրը չպիտի կարկոյտ, այլ ապագային մէջ հաւանական վերջ տալու իրական միջոցներ պիտի որոյն :

Լորտ Կրանֆիլ ըստ թէ Հայք մեծ իրաւունք ունին իբրեւ խաղաղ և աշխատասէր ազգ մը տէրութեանց խորհրդոյ ուղարկութեան : Այնիւ մարքիզին (Լորտ Սալիսբըրի) համակրութեան խոստումները գոհութեան արժանի են : Բայց հարկաւ նախարարը չուզեր այժմէն իւր ընթացքին վրայ բացատրութիւն տալ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 12 յունիս.
Կայսեր առողջութիւնը կը շարունակէ բարելոյն : Ն. վեհափառութիւնն անկողնէն ելաւ : Տէրութեանց ժողովը լիազօր երեսփոխաններն եկան, ի բաց առեալ Կ. Պօլսէն սպասուածները : Վաղը պիտի բացուի ժողովը :

Կորչաքոֆ իշխանը միշտ հիւանդոտ է : Փարիզ 12 յունիս.

Հանովէրի թագաւորն այս առաւօտ մեռաւ :

Պրիսկէ 13 յունիս.
Յունիս 11 ի ընտրութեանց մէջ ազատականաց յաղթող ելնելուն վրայ Կաթոլիկ նախարարութիւնն հրաժարական տուաւ : Թագաւորը նախարարութեան հրաժարականն ընդունելով Պ. Ֆրէյզ-Օրպանի յանձնեց նոր նախարարութեան կազմութիւնը :

Պէրլին 13 յունիս.
Տէրութեանց լիազօր երեսփոխաններն իրենց համազգեստներն հագած կէս օրէն ժամ մ'եաքը Պիամարք իշխանին պալատն եկան, և մէկ ժամ յետոյ Գերմանական դռնակը պարզեցաւ պալատին վրայ ի նշան բացման տէրութեանց խորհրդոյն : Պիամարք իշխանը տէրութեանց լիազօր երեսփոխաններուն դաւաճան ողջունեց : Անմիջապէս յետոյ Անարաի կոմսը խօսելով առաջարկեց խորհրդին նախագահութիւնը Պիամարք իշխանին յանձնել ոչ միայն սովորութիւնն այնպէս ըլլալուն համար, այլ անոր բարձր իմաստութեան համար իրեն մեծարանք և շնորհակալութիւն յայտնելու զգացմամբ : Անարաի կոմսն աւարտեց իւր խօսքն եռանդալիւ ըզմանց յայտնելով Վիլհէլմ կայսեր շնորհով առողջանալուն համար :

Պիամարք իշխանն իւր շնորհակալութիւնը յայտնէ ետեւ պաշտօնապէս նախագահական արժանի բաղմեցաւ և զիւանին կազմութեանը ձեռնարկեց :

Ժողովը որոշեց բացարձակապէս դադարեցնել իւր խորհուրդներն ու որոշումները :

Վիճարանութիւնն յառաջիկայ նըստին մէջ պիտի սկսի որ երկուշաբթի օրը պիտի գումարի : Բայց մինչև այն ժամանակ լիազօր երեսփոխանը պիտի գումարին և տէրութեանց խորհրդին աշխատութիւններն հնար եղածին չափ միջուկ համար պիտի խորհրդակցին : Անարաի կոմսն և Շուվալֆ կոմսն արգէն խորհրդակցութիւն մ'ըրին այս րանիս հաւրայ :

Պէրլին 14 յունիս.
Գահաժառանգ իշխանը կողմը մը տուաւ տէրութեանց խորհրդոյ անդամոց : Ճաշին վերջը տէրութեանց խորհրդին մէջ ներկայացեալ վեհափառացի համար բաժակ առաջարկելով իւր օգնական հօրը շուտով առողջանալուն համար առանց ըրած բարեկամութիւններէն չնորհակալ եղաւ, և յանուն կայսեր անկեղծ փափագ յայտնեց լիազօր երեսփոխանաց ջանքերն ընդհանուր համաձայնութեամբ պահելու տեսնելու, որ լաւագոյն դրաւականը պիտի ըլլայ աշխարհի խաղաղութեան :

Խոնարա 14 յունիս
Օրմ. Բոնո. 45 3/8
Փր. 1865 49 1/8
» 1869 17 1/8
» 1871 51
» 1872 27
» 1873 17 1/8
» Եղիսի 71 7/8
Անգլ. Բոնո. 95 9/16
Փարիզ 14 յունիս.
Օրմ. Բոնո. 13,42 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սալիսբըրի Բարձր. Սաֆէթի փաշային առ երկիրն և առ

պետութիւն մատուցած երկարժամանակեայ կարեւոր ծառայութեանց յարգը ճանչելուն նոր ազգացոյց մը տարւ համար հետեւեալ կայսերական ինքնագիր խաթմը չրկեց անոր .

« Իմ Մեծաշուք վէզիրս Սաֆէթի փաշա .

« Իմ վեհապանծ հօրս, մեծարոյ հօրեղբորս և եղբորս գահակալութեան օրով ձեր վարած այլ և այլ պաշտօններուն մէջ ձեր ցոյց տուած ուղղութեամբն ու հաւատարմութեամբ անոնց սէրն ու վստահութիւնը գրաւած էիք :

« Նմանապէս իմ գահակալութեանէս ի վեր ինձ ցոյց տուած հաւատարմութիւնիդ ու անձնութեան թիւնիդ՝ ձեր վրայ ունեցած վստահութիւնն ամրապնդեցին :

« Մեր երկրին փրկութիւնն ու բարգաւաճանքն իմ ամենէն սիրելի բաղձանացս առարկայն ըլլալով, և այս ալ ուրիշ միջոցաւ ձեռք չկրնալով ձեռք բերուիլ, այլ միայն մեր վարկին վերահաստատմամբն, որ Պետութեան մը գոյութեան սկիզբն է, երկրագործութեան զարգացմամբ, որ Մեր երկրին բնական հարստութիւնը կը կազմէ, և Մեր տէրութեան ամեն երկիրներուն մէջ հասարակաց կրթութեան տարածմամբ :

« Այս երեք կէտերուն իմ կայսերական բաղձանացս համեմատ իրարման համար ձեր հանձարեղ և լուստօր ջանից վրայ դրած եմ վստահութիւնս :

« Վերջին ծայր դո՛հ ըլլալով ձեր մատուցած ամենահաւատարմ և անձնաւէր ծառայութիւններէն, միով բանիւ՝ ձեր ամեն գործերէն ու արարքներէն, այն ինքնագիր նամակս կը զրկեմ ձեզ իբրեւ մասնաւոր յիշատակ մ'ե իբրեւ նոր ազգացոյց մ'իմ առ ձեզ ունեցած սիրոյս և կատարեալ վստահութեանս :

Հինգշաբթի օրը Բարձր. Մեծ-Եպարքոսն երկար խորհրդակցութիւն մ'ըրաւ եւրամից նախարար Քեանի փաշային, նախարդ առաջին օհնեկապետ Նաֆիզ փաշային, Պ. Զարիֆի և Պ. Քորօնէօի հետ :

Արտաքին գործոց նախարարութեան խորհրդակցանի (Միւսթէշար) պաշտօնը նոյն նախարարութեան ընդհանուր քաղաքական վսեմ Համաձեռնեմ Սարգիս էֆենդիին յանձնուեցաւ առժամանակեայ կերպիւ :

Նեօլոգոս անուն լոյն լրագիրը կը ծանուցանէ թէ Պէրլին գնացող Օսմ. լիազօր երեսփոխան Թուրքիոյ ընդհանուր կազմակերպութեան ծրագիր մը տարեր են իրենց հետ, Օսմ. տէրութեան անկախութեանն ու ամբողջութեան վրայ հիմնեալ, և կարեւոր բարենորոգումներ պարունակող, որոց զխաւորներն են Գաղղիոյ քաղաքային և պատմական օրինաւորութիւնները մնայնել, բնակչաց մեծագոյն մասը քրիստոնեայ եղող գաւառացի մէջ քրիստոնեայ կառավարիչներ կարգել, և տէրութեան պաշտօնական լեզուն հետո՛ւ այն գաւառին բնակչաց մեծամասնութեան խօսած լեզուն իւր պաշտօնական լեզու ընդունիլ, որոց բաշխումն ու հաստատման գաւառացի վարչական խորհուրդներուն ձեռք կատարելու բարենորոգմանց գործադրութեան հըսկելու համար Կ. Պօլսոյ մէջ բարձրագոյն ատեան կամ խորհուրդ մը հաստատել իսլամ և քրիստոնեայ հրապտակներէ և Եւրոպացիներէ բաղկացեալ :

Պանտրմայի գաւառին մէջ Զէր-

քէզներն տարաւարութիւններ ու ըստ պանուլ թիւններ գործած ըլլալով, Բ. Դուռն աւագաց ժողովին անդամ Ա. ի Րիզա պէյն յատուկ պաշտօնով Պանտրմայ զրկեց, որպէս զի անաչառ և խիստ քննութիւն մ'ընելով, չարագործները պատժէ և հասարակաց անդ օրրութիւնն ապահովելու համար հարկ եղած միջոցները տնօրինէ :

Սիլիվրիէն եկած ճանապարհորդք կը ծանուցանեն թէ Ռուսերն յիշեալ քաղաքին մէջ ամբուլութիւններ կը շինեն :

Քըրք Գիլիսէէն եկած նամակ մ'ալ կը ծանուցանէ թէ երսուն հազար Ռուսական զօրաց բանակ մը կ'ապաստէր հոն մինչև երկու օր, և ասոր համար Ագրիանուպօլսէն բազում նպար կերթար և կ'շտեմարանուէր յիշեալ զիւղաքաղաքին մէջ :

Լրագրոյս 2118 թուոյն մէջ անուանի Էօսէն Պօսէ անուն ճիզվիթ երօնաւորին մահը ծանուցանելու առթիւ ըսած էինք թէ յիշեալ կրօնաւորը ժամանակաւ Հայաստան ուղևորութիւն ըրած և Անիի աւերակներուն վրայ դիրք մ'ալ հրատարակած է, զոր Զամուրճեան Տէրոյնեց պատուելին թարգմանած, բայց Պապական միջնաւորութեամբ տողորեալ ըլլալուն պատճառաւ չէ համարձակած հրատարակել :

Տէրոյնեց պատուելին մեր այս գիտողութեան պատասխան մը գրելով՝ կը ծանուցանէ թէ յիշեալ գիրքը հանգուցեալ Մամիկոնեան Կարապետ աղայի խնդրանք և անոր ծախքովը թարգմանած՝ և բնագիրն ու թարգմանութիւնը միանգամայն անոր յանձնած ըլլալով, չապուելուն պատճառը թարգմանել տուողին այնպէս կամք չուենալն եղած է և ոչ թէ իւր չհամարձակիլը :

Տիարպէքիբէն մայիս 13 թուով թէրճէպոնը Էֆքեար լրագրին գըրուած նամակէ մը ցաւելով կիմանաք թէ Բ.Գրան կողմէ Նիւուէի աւերակներուն հնութիւնները խուզարկելու պաշտօնով այն կողմերն ուղևորող Սիլիվրիէն Հ. Կընէս արգիւնաւոր և հայրենասէր վարդապետը, Տիարպէքիբէն հասած ժամանակ հիւանդանալով, Պ. Պապին ուղղեալ մեղադրական և հնազանդական գիր մ'ստորագրելէ և իւր կրօնական պարտականութիւնները կատարելէ ետեւ վախճանեց :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԵՐՈՒՄՈՒՄԻԷ	
2 յունիս ուրաթ իրիկուն	47, 3
3 յունիս շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	46,28
ժամ 5 ին	16,24
Բուսմիկ երկաթուղի	Ֆր. 52 50
Թղթագրամ	Լր. 281 20

ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵՐՊՈՑ

Կ. Պօլս 2 Յունիս	
Սալիսթէ թէնիկալի բաժ. Անգլ. լր.	4, 8
» փոխանակութեան	3,48
Կ. Պօլսոյ Պանդային	5,
Քրէտի թէնիկալ	4, 8
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փր. 1863	82 1/2
» 1865	83 1/2
» 1869	82 1/2
» 1872	28 1/4
» 1873	82
Թրամուայ	Օսմ. լր. 1 30

ԸՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՑ

2 Յունիս	
Անգլ. լր.	109 2
Նարոնն ոսկի	87 6
Խրէստիալ Ռուս	88 20
Գլըմից	54
Հինգ ֆրանք	—
Հինգ նոց	120
Պըլնիս	178

